312 Մեղքի համար մեռած եմ,

1. Մեղքի համար մեռած եմ,
Մեղքի համար մեռած եմ,
Մեղքին մեռած լինելով՝
Աստծո զավակ եմ:
Մեղքից ազատ եմ, (2)
Տիեզերքի Արարչի՝
Իմ հոր ժառանգն եմ:

Հոգին է վկայում,
Հոգին է ազատում,
Խաչի ճանապարհով
Տերն է ինձ տանում:
Հոգին է վկայում,
Հոգին է ազատում,
Սիրո ճանապարհով
Ինձ առաջնորդում:

2. Օրենքի համար մեռա
Քրիստոսի մարմնով,
Քրիստոսի շնորհքով
Աստծո զավակ եմ:
Օրենքից ազատ եմ, (2)
Օրենքից ազատ՝
Աստծո զավակ եմ:

3. Աշխարհի համար մեռա
Իմ Տիրոջ խաչով, (2)
Աշխարհին խաչված եմ:
Աստծուց ծնված եմ,
Աշխարհին կհաղթեմ,
Եվ հենց մեր հավատքն է,
Որ աշխարհին կհաղթե: